

ԱՌԱՍՊԵԼՆԵՐՈՎ ՊԵՏՔ ԶԷ ԱՊՐԻԼ

Posted on November 25, 2022 by Keghart



Category: [Opinions](#)



Հարցազրույց ֆրանսահայ միջազգային լրագրող եւ քաղաքական վերլուծաբան Տիգրան Եկաւեանին հետ:

21 Նոյեմբեր 2022

Եկաւեան կը ներկայացնէ իր տեսակետները ֆրանսայի Ծերակոյտի վերջերս կայացուցած հայանպաստ որոշումին ու անոր հաւանական հետեւանքներուն վերաբերեալ, ինչպէս նաեւ իր պատկերացումները ֆրանսահայ գաղութին ու ՀՀ-ի պետութեան յարաբերութեան մասին: Ան խորհուրդ կու տայ չապաւինիլ օտարներու քաղցր-մեղր խօսքերուն եւ ՀՀ-Արցախի անվտանգութիւնն ապահովել հայութեան սեփական միջոցներով՝ յառաջացնելով ազգային նոր յարացոյց (paradigm) եւ տեսլական, ուր հայութեան ազգային եւ ՀՀ-Արցախի պետական շահերը ներդաշնակ ըլլան:

Comments



Viken Attarian – 2022-11-25 19:48:19

Տիգրան Եկաւեանը լուրջ եւ քննադատական միտք ունեցող մտաւորական մըն է որ ճիշդ ախտաճանաչում կը կատարէ մեր ազգը յուզող հիմնահարցին մասին որ հայկական զոյգ պետութիւններու վերապրումն իսկ է: Երանի թէ Հայաստանի պետութիւնը կարողանար առ նուազն հասկնալ եւ գնահատել իր միտքը՝ անմիջապէս համազգային ճգնաժամային զօրաշարժի մը գլուխը անցնելով: Մեր նոր Սարդաարապատը սկսաւ քառասնօրեայ պատերազմին յաջորդ օրը: Ժամանակի շռայլութիւն շատոնցուրնէ չունինք: Կամ ազգովին եւ կամաւոր կերպով կ'որոշենք արթննալ մեր թմբիրէն, կամ ալ պատմութեան բեմէն պիտի հեռանանք շուտով եւ ակամայ: Բարեկամօրէն՝ Վիգէն Լ. Ադդարեան